

վայր մը կարծած է, նկարագրած ատեն ոչ իսկ բառ մը ունի հոն չինուած գորգերու մասին: Մարքոյ Բոլոյ, Իսյն Պաթութա եւ ուրիշներ Կարին չինուած գորգերու մասին ո՛ր եւ է վկայութիւն չունին: Նոյն ատեն զԺրագղարար Ապու Աւինի վերագրուած վկայութեան բնագիրը կը պակսի ինծի: Եթէ Մուսթաֆի Եաքութէն առած է Կարնոյ գորգերու իր վկայութիւնը, ըստ երեւոյթի Եաքութ ալ Ապու Աւինէն առած է, որով Կարնոյ գորգերուն միակ աղբիւրը կ'ըլլայ Ապու Աւին: Եթէ ենթադրենք որ իրապէս սխալ մը կամ չփոթութիւն մը չկայ, դարձեալ խնդիր է թէ միայն Ապու Աւինի վկայութիւնը պիտի բաւէ՞ր այս կարեւոր հարցին համար: Պր. Սաղրդեան վկայութիւնը լրջօրէն ընդունած է սապէս եզրակացնելով. «Ուրեմն ոչ միայն Հայաստանի շատ մը քաղաքներուն մէջ գորգեր կը չինուէին այնպիսի ժամանակ մը որմէ ոչ մէկ արտադրութիւն հասած է մեզի, այլ եւ այն բանն իսկ, որով ամբողջ մահմետական Արեւելքի մէջ (Հնդկաստանն ալ մէջն ըլլալով) կը կոչուին թաւմալ գորգերը, փոխ առնուած է, ըստ արար աղբիւրի մը, գորգեր արտադրող հայ մայրաքաղաքի մը անունէն: Թուրքիոյ մէջ, այդ բառը առհասարակ կ'արտասանուի խալի:

«Կարելի է նոյնիսկ հարց դնել թէ այդ անուանակոչումը ենթադրել չի տար արդեօք որ Հայաստանի մէջ (Մերձաւոր Արեւելքը միայն ի նկատի ունենալով) հնարուած է հանդոյցով գորգը, հակադրուած՝ Բիլիմիմ: Այդ հնարումը պէտք է տեղի ունեցած ըլլայ Քալիֆալ հայաքաղաքին Արարներէ գրաւուելուն եւ Սելճուքներու արշաւանքին միջեւ, այսինքն այն չորս հարիւր տարիներուն միջոցին որ կը գտնուին է եւ ԺԱ դարերու մէջտեղը»⁽³⁷⁾:

Մենք սակայն շատ մը առարկելի կէտեր կրնանք յառաջ բերել այս եզրակացութեան մասին: Կարին երբեք արտադրող քաղաք մը չէ եղած, այլ ռազմական եւ անկէ վերջն ալ առեւտրական կեդրոն մը հանչցուած է: Յետոյ Մերձաւոր Արեւելքի մէջ գտնուած են գորգի մնացորդներ՝ որոնք Գ դարէն իսկ ըլլալու ապացոյցներ ունին: Դ-Ե դարերուն հայոց իսկ ծանօթ էր գորգը եւ անոնցմէ կը գործածուէր:

Ապու Աւինէ գատ ուրիշ ոչ ոք կը վկայէ Կարնոյ մասին իբր գորգաչինութեան վայր: Կարին զուրկ հում նիւթերէ, առեւտրական շուկայ մը չէր եւ ոչ ալ արտադրողական կեդրոն մը: Կարնոյ համբաւը գլխաւորաբար զինուորական կեդրոն մը եւ առեւտրական գլխաւոր համբու մը վրայ հանգրուան մը ըլլալուն մէջն է:

Ասկէ գատ կան պատմական շատ որոշ վկայութիւններ, որոնք Պր. Սաղրդեանի ենթադրութիւնները եւ հետեւութիւնները Կարին-Գալի-խալիի մասին կը չքացնեն:

Իսյն խալտուն Ը դարու Հայաստանէն Արաքսցոյց առած բնահարկերուն գլուխը կը նշանակէ քսան գորգեր: Բնահարկը երկրին հում կամ գործուած գլխաւոր արտադրութիւններէն կ'առնուէր: Ու-

(37) Անահիտ. - Նոր Շրջան, Գ. տարի, թիւ 5-6, էջ 78: